Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/1ՆՇ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» հունիսի 2017թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Օ.Խաչատրյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Երպետ» ՍՊԸ և «Սթոնս» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)-ի, «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի, «Սուարդի» ԲԸ Հայաստանյան մասնաճյուղի, «ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ-ի «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չի համապատասխանում՝ «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը քանի որ տուժանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Երպետ» ՍՊԸ և «Սթոնս» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)-ի, «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի, «Սուարդի» ԲԸ Հայաստանյան մասնաճյուղի, «ԲԵԼԼԻՍ» ՍՊԸ-ի «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Անբավարար», քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

գ) ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- «Աշոտ և Դայանա» ՍՊԸ -ին՝ 1-ին չափաբաժնի մասով:

դ) առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

ե) փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 4-րդ հարկ, N 419 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Օ.Խաչատրյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա.Մկրտչյան